

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

(Առարկա)

Թեմա՝ Բարոյական արժեքները և նրանց ձևավորումը
մաթեմատիկայի դասավանդման գործընթացում

Կազմեց՝ Թագուհի Մկրտչյան, Լեհվազի միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Ալինա Մկրտչյան

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Վերապատրաստող կազմակերպության անվանումը

Կապան 2023

Բովանդակություն

Ներածություն.....	3
Գլուխ 1. Ժամանակակից կրթական մոտեցումները և բարոյական արժեքների ձևավորման խնդիրը.....	5
Գլուխ 2. Պարտքի և պատասխանատվության ձևավորման խնդիրը ՀՀ կրթական համակարգում.....	10
• 2.1 Պարտք կամ պատասխանատվություն.....	10
• 2.2 Բարոյական պարտականություն.....	12
• 2.3 Մաթեմատիկան, սերը և հարգանքը.....	12
Փորձ1.....	13
Փորձ2.....	14
Եզրակացություն.....	16
Գրականության ցանկ.....	17
Հավելված.....	18

Ներածություն

Մարդու գիտակցական կամքը և արժեքավոր նպատակների ձգտելը միշտ կապված է անձի բարոյական սկզբունքների հետ: Անձի բարոյական աշխարհում ներառված են բարությունը, ճշմարտությունը, գեղեցիկի հանդեպ ձգտումը, պարտքի զգացումը, պատասխանատվությունը, իդեալները, խիղճը, արդարությունը, ազատությունը, ընկերությունը, սերը (տես 16): Հաճախ մենք մեզ պարտավորված ենք զգում անդադար ջանքեր գործադրել, քանի որ մեր գործունեությունը պետք է մեր մերձավորներին, հասարակությանը, հայրենիքին: Այդ իսկ պատճառով կամային գործողություններ կատարելիս մենք շատ հաճախ բարոյական զգացմունքներ ենք ապրում՝ կոնկրետ հուզական վիճակների ձևով: Որքան ավելի ուժգին ենք մենք բարոյական հույզեր ապրում , այնքան ավելի մեծ եռանդ կարող ենք կենտրոնացնել դեպի մեծ նպատակը տանող ճանապարհին ի հայտ եկած դժվարությունները հաղթահարելու համար: Հնարավոր չէ մեծ ձեռնարկներ պլանավորել և իրագործել՝ առանց բարոյական նորմերի և եռանդուն մասնակցության:

Բարոյական զգացմունքները դրդապատճառներ են , կարող են և գործողությունների մեջ մղել մարդուն, և զսպել նրան: Չէ՞ որ կամքի ուժ է պետք որոշ գործողություններից հետ կանգնելու համար: Իզուր չէ, որ ասում են թե մարդու համար ինքն իրեն հաղթելն ավելի դժվար է, քան թշնամիներին հաղթելը:

Այսպիսով, յուրաքանչյուր մարդ իր բարոյական վարքը դրսևորելիս ելնում է բարոյական այն արժեքներից, որոնք նա կրում է: Դա պայմանավորված է նրանով, որ մարդը բարոյական արժեքները ընկալում է որպես պարտք, որպես պրակտիկ իրականացման համար ենթակա գործողություն: Հետևաբար պարտքի գիտակցումով և իրագործումով է պայմանավորված մարդու բարոյական վարքը ընդհանրապես, ինչը ընդգծում է բարոյական այս արժեքի կարևորությունը: Մեծ է կրթության դերը բարոյական արժեքների ձևավորման գործում: Կարծում ենք , որ մաթեմատիկական նույնպես ունի անհրաժեշտ կրթական ներուժ արժեքներ ձևավորելու գործում:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Ներկայացված աշխատանքը նվիրված է մաթեմատիկա առարկայի ուսուցման գործընթացում աշակերտների մոտ պարտքի և պատասխանատվության դաստիարակման , որպես անհատ նրանց անձնային

հատկությունների ձևավորման աջակցման տեսական հիմնավորմանն ու մանկավարժական պրակտիկայում դրանց իրականացման խնդիրներին:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել մաթեմատիկա առարկայի դասավանդման ընթացքում, աշակերտի մոտ պարտքի, որպես բարոյական արժեքի ձևավորման խնդիրը, ներկայացնել դրա տեսական հիմնավորումը և պարզել նշված խնդրի մասին դասավանդող ուսուցիչների ունեցած պատկերացումները:

Աշխատանքի արդիականությունը: Այսօր մեր հանրապետության առջև առաջացել են մի շարք տնտեսական և քաղաքական խնդիրներ: Նրանց թվում է օրեցօր աճող արտագաղթի խնդիրը, որի հիմնական պատճառներից կարելի է համարել սխալ տնտեսական քաղաքականությունը: Սակայն չի կարելի արտագաղթը բացատրել միայն սոցիալ տնտեսական գործոններով: Կարող են լինել նաև արտագաղթի օբյեկտիվ պատճառներ: Այսօր Հայաստանից Ռուսաստան, ԱՄՆ և Եվրոպա գաղթում են նաև նրանք, ովքեր սոցիալական ապահովության խնդիր չունեն, պարզապես ձգտում են ավելիին: Ըստ հարցումների տվյալների Հայաստանից գաղթածների մոտ քսան տոկոսը հենց այս շարժառիթով է առաջնորդվում: Նրանց թվում են երիտասարդ ուսանողներ, գիտնականներ, ովքեր սովորելու կամ մասնագիտությամբ աշխատելու հեռանկարով մեկնում են մեր երկրից: Այսպես, մեծ և հարուստ պետությունները իրենց անհրաժեշտ «մերգելյանները» ստանում են տնտեսապես թույլ երկրներից՝ օգտվելով շուկայական հարաբերությունների օրենքներից: Այլ կերպ ասած՝ մեր երկրի միջոցներով կադրեր ենք նախապատրաստում այլ երկրների համար: Ահա այս պայմաններում է, որ հրատապ հարց է մեր մատաղ սերնդի մոտ պարտքի և պատասխանատվության բարոյական որակի ձևավորումը, պարտք՝ իր համայնքի, ընտանիքի, հայրենիքի հանդեպ: Ցանկացած գայթակղիչ առաջարկ ստանալու դեպքում մեր երիտասարդները չպետք է մոռանան իրենց երկրի հանդեպ ունեցած պարտքի մասին: Այս առումով մեր աշխատանքը ավելի քան արդիական է:

Աշխատանքի հետազոտման մեթոդները: Հետազոտության ընթացքում օգտագործվել են տեսական մեթոդներ- մանկավարժական, հոգեբանական, փիլիսոփայական գրականության ուսումնասիրում և վերլուծում, ինչպես նաև փորձնական մեթոդներ- դիտում, զրույց, հարցում, թեստավորում:

Ստացված արդյունքները: Մշակվել է բաց թեստային մի համակարգ, որը բացահայտում է մաթեմատիկա առարկայի ուսուցման գործընթացում աշակերտների մոտ պատասխանատվության դաստիարակման, նրանց անձնային հատկությունների ձևավորման ուղղակի կապը, ինչպես նաև իրականացվել է թեստի անցկացում , մշակվել են արդյունքները, ներկայացվել է եզրակացությունը:

Աշխատանքի ծավալը և կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից , երկու տեսական գլուխներից, երկու հետազոտությունից, եզրակացությունից, գրականության ցանկից ու հավելվածից: Ընդհանուր ծավալը՝ 20 էջ:

Գլուխ 1: Ժամանակակից կրթական մոտեցումները և բարոյական արժեքների ձևավորման խնդիրը:

Փոխվում են ժամանակները, փոխվում են կրթական պահանջները: Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան մշակվել են դպրոցական առարկաների չափորոշիչները, ծրագրերը, դասագրքերը և այլն: Մաթեմատիկայի դպրոցական դասընթացի հիմքում ընկած է երկու գլխավոր գործառույթ, որոնք որոշվում են համաշխարհային կրթական պահանջներին համապատասխան և տեղայնացվում են հաշվի առնելով տվյալ հասարակության մշակույթը, տվյալ պետության շահերը: Այսպիսով, մաթեմատիկական կրթությունը համաշխարհային մշակույթի մի մասնիկ է, որի նպատակն է՝ կրթություն մաթեմատիկայի միջոցով: Այս երկու գործառույթները, միասնական լինելով հանդերձ, մանկավարժական պրակտիկայում հակասությունների են հանգեցնում, երբ անձի շահերը բխվում են պետության շահերի հետ: Այսօր դպրոցական կրթական համակարգում մաթեմատիկական ունի գերակշռություն այլ առարկաների նկատմամբ: Սրան հակառակ, որոշ երկրներում, որոնց թվում՝ Հայաստանում, կասկած կա, արդյոք տեղին է այս դոմինանտությունը, հատկապես ավագ դպրոցում: Տոկոսային հարաբերությամբ Մաթեմատիկա առարկայի ժամաքանակները, այն էլ՝ ԲՏՃՄ բաղադրիչի կազմում, ընդամենը 12.5-38 % է:(տես 15)

Այնուամենայնիվ, չպետք է մոռանալ, որ մաթեմատիկական զարգացում է անհատի ինտելեկտուալ կարողությունները, իսկ որքան զարգացած են տվյալ հասարակության անդամ մարդիկ, այնքան զարգացած է այդ հասարակությունը: Հետևաբար, մաթեմատիկական ընդհանուր կրթության առարկա է, այն զարգացնում է մարդու մտածողությունը և այսու առումով ունի հանրակրթական գործառույթ:

Դպրոցական մաթեմատիկական կրթության հումանիզացումը նոր կրթական կոնցեպցիայի մի մասն է: Հումանիզացում ասելով հասկանում ենք հետևյալը. «ոչ թե աշակերտն է մաթեմատիկայի համար, այլ մաթեմատիկան է աշակերտի համար», այլ կերպ ասած՝ շեշտը դրվում է աշակերտի անձի վրա: Այժմյան դպրոցական կրթությունը համարվում է անձնակողմնորոշված: Անձնակողմնորոշված կրթության նպատակն է

մարդու մեջ մարդ ձևավորելու համար պայմաններ ստեղծելը: Անձնակողմնորոշված ուսուցումը աշակերտի մեջ ինքնաիրացման, ադապտացիայի, ինքնապաշտպանության, դաստիարակության մեխանիզմներ, որոնք անհրաժեշտ են ինքնուրույն կենսակերպ վարելու համար, մարդկանց , բնության մշակույթի, քաղաքակրթության հետ անվտանգ փոխհարաբերություններ ունենալու համար: Անձնակողմնորոշված կրթությունը իր առջև նպատակ չի դնում վերոնշյալ հատկություններով անձի ձևավորում, այլ ստեղծում է այնպիսի պայմաններ, որոնց դեպքում սովորողը ինքն է բացահայտում իր ինտելեկտուալ պոտենցիալը:

Անձնակողմնորոշված ուսուցման նպատակը, ըստ Վ. Վ. Սերիկովայի, կայանում է անհատականության հետևյալ գործառույթների զրգացումը՝

- Ընտրության գործառույթ
- Ռեֆլեքսիայի գործառույթ
- Ձևավորող գործառույթ
- Պատասխանատվության գործառույթ
- Ինքնավարության սկզբունք (տես16)

Որպես ընդհանուր միջնակարգ կրթության բաղադրիչ, Մաթեմատիկա ուսումնական առարկայի նպատակն է յուրաքանչյուր աշակերտի մեջ ձևավորել աբստրակտ, տրամաբանակ, ալգորիթմական մտածողություն, ինչպես նաև՝ մտքի ուժ, ճկունություն, կառուցողականություն և այլն: Մտածողության այս տեսակները մաթեմատիկական որևէ առանձին հասկացության ուսուցման հետևանքով չեն ձևավորվում: Մաթեմատիկայի ուսուցման յուրահատկությունը կայանում է նրանում, որ առանց նրա դպրոցական բոլոր մյուս առարկաները չեն կարող միայնակ իրականացնել վերոնշյալ որակների ձևավորումը: Այսպիսով, մաթեմատիկայի ուսուցման խնդիրը ոչ թե մաթեմատիկա գիտության հիմունքների ուսուցումն է, որպես այդպիսին, այլև սովորողների ընդհանուր ինտելեկտուալ զարգացումը, անձնային այնպիսի որակների ձևավորում, որոնց միջոցով հնարավոր է դառնում մարդու դինամիկ ադապտացումը հասարակությանը:

Իհարկե, մաթեմատիկական գիտելիքները նաև կիրառական են, ուղղված են շրջակա աշխարհի ճանաչմանը: «Մաթեմատիկական բոլորի համար» սկզբունքից ելնելով կարելի է պնդել, որ անհրաժեշտ են մեթոդների և միջոցների փոփոխություն այնպես, որ դասաժամին տրամադրված ինֆորմացիան ձևավորի աշակերտի մոտ ոչ միայն

վերլուծելու, համադրելու, գիտելիքը կիրառելու հմտություններ, այլև ապահովի արժեքային համակարգի ձևավորում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեռևս 2010 թվականին նոր չափորոշիչ ընդունելով(որով չեղարկվեց 2004 թվականի չափորոշիչը) հանրակրթության ծրագրային բովանդակության պարտադիր առարկաների ցանկում տեղ գտած Մաթեմատիկա առարկայի համար սահմանեց հետևյալ բովանդակային չափանիշները՝

- Գիտելիքների համակարգ
- Կարողություններ և հմտություններ
- Արժեքային համակարգ (տես 15):
Վերջիններս նոր չափորոշչով ներկայացված են այսպես՝
- Գիտելիք
- Հմտություն
- Դիրքորոշում
- Արժեքային բաղադրիչ

ՀՀ կառավարության 2023 թվականի որոշմամբ հաստատվեց նոր վերամշակված հանրակրթական չափորոշիչը, որի շրջանակներում Մաթեմատիկա առարկայի ուսուցման հիմնական սկզբունքներ են համարվում

1. Գիտականության սկզբունքը
2. Դաստիարակության սկզբունքը
3. Ակնառուության սկզբունքը
4. Գիտակցվածության, ակտիվության ու ինքնուրույնության սկզբունքը
5. Գիտելիքների ու կարողությունների կիրառելիության սկզբունքը
6. Համակարգվածության ու հաջորդականության սկզբունքը
7. Հասանելիության սկզբունքը
8. Տարբերակվածության սկզբունքը
9. Աշակերտակենտրոնության սկզբունքը
10. Արժեքային ուսուցման սկզբունքը

Որպես համեմատություն ցանկանում ենք մեջբերել նախորդ չափորոշիչից «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկայի ուսուցման արդյունքում հետևյալ արժեքի ձևավորմանը՝ «սովորողը պետք է տարբեր

իրավիճակներում գիտակցի սեփական քայլերը գնահատելու կարողությունը, ցուցաբերի **պարտաճանաչություն** և **պատասխանատվության** բարձր զգացում գործի նկատմամբ»: «Երկրաչափություն» առարկայի ուսումնասիրման շնորհիվ սովորողը պետք է , մեջբերում եմ, գնահատի ճշմարտությունը, արդարությունը, ազնվությունը, արժանապատվությունը, ցուցաբերի դրանք պաշտպանելու վարքագիծ, անկանխակալ տեսակետ հայտնելու **պատասխանատվություն**: Եվ վերջապես՝ կրթության նպատակների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ դպրոցի շրջանավարտը պետք է՝ «լինի մարդասեր, ազնիվ, հայրենասեր և **պատասխանատվության զգացումով** օժտված անհատ»:

Այսպիսով, մեր հետազոտության նպատակն է փորձի միջոցով հաստատել՝ Մաթեմատիկա առարկան նպաստում է պարտքի և պատասխանատվության բարոյական արժեքի ձևավորմանը և որքան էլ որ փոփոխական են ժամանակները և ներկայացված պահանջները՝ այս արժեքի կարևորությունը անքննելի է և չպետք է անմասն մնա հանրակրթության չափորոշչային պահանջներից:

Գլուխ 2: Պարտքի և պատասխանատվության ձևավորման խնդիրը ՀՀ կրթական համակարգում

Մարդու անհատական և ընկերային կյանքի կազմակերպման համար անհրաժեշտ և կարևոր արժեքներից մեկը պարտքն է: Պարտքը սեփական բարոյական պատասխանատվության գիտակցման ունակությունն է: Ըստ Հեգելի, մարդու պարտքը արդար գործ կատարելն ու ընդհանուրի բարիքի համար հոգ տանելն է: (տես4)Պարտքի մասին փիլիսոփայական ուսմունքը մշակել է Կանտը (տես 6), որին և հետևում ենք մենք ստորև շարադրվող տեսակետերում և մոտեցումներում: Մարդը որպես կենդանի էակ ունի պարտականություններ իր և բնության հանդեպ,ինչպես նաև՝ մարդկային տեսակը պահպանելու պարտականություն: Հասարակությունը և պետությունը նույնպես ունեն պարտականություններ մարդու հանդեպ: Հայաստանի Հանրապետությունը, որպես համայն հայության հայրենիք, պարտք և պատասխանատվություն ունի ոչ միայն իր քաղաքացիների հանդեպ, այլև աշխարհասփյուռ ողջ հայության հանդեպ: Հայոց պետականության վերականգմամբ հայապահպանման խնդիրներն աշխարհում դադարել են լինել միայն սփյուռքի կազմակերպությունների մտահոգությունը: Դրանք բոլորիս հանձնառությունն են: Ավելին՝ հայոց լեզվի նահանջը որոշ գաղթօջախներում սրություն է հաղորդել մեր կրթական հիմնահարցերին:

Կրթական ողջ գործընթացը, մաթեմատիկայի դասավանդման գործընթացը մասնավորապես, նաև պարտքի և պարտականությունների իրականացման, համապատասխան բարոյական որակի ձևավորման գործընթաց է:

2.2. Պարտք և պատասխանատվություն

Կրթության գործընթացի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ են թե ուսուցչի , թե աշակերտի կողմից ուսումնական գործընթացի նկատմամբ իրենց ունեցած պարտքի հանդեպ պատասխանատվության համապատասխան դրսևորումներ: Բնականաբար, գործընթացի առաջին և հիմնական պատասխանատուն ուսուցիչն է, ով այստեղ ունի նաև աշխատանքային պարտականություններ: Սակայն ուսուցչի

աշխատանքային պարտավորությունների իրականացումը, հատկապես բարոյական դաստիարակության գործառույթի մասով, չափազանց բարդ գործընթաց է: Հիմնական դժվարությունը կայանում է դժվար վերահսկելիության և սպասվելիք արդյունքների ստուգման, գնահատման դժվարության կամ անհնարիության մեջ: Իսկապես, եթե սովորողի մոտ գիտելիքի կամ կարողունակության առկայությունը կարելի է ստուգել, վերահսկել, գնահատել, ապա բարոյական որևէ որակի առկայությունը կարելի է տեսնել միայն այնպիսի իրադրություններում, որտեղ այդ որակը դրսևորվելու հնարավորություն ունի: Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ ստուգվողը կարող է նաև կեղծել այդ որակի առկայությունը: Միաժամանակ, ուսուցիչը դաստիարակչական խնդիրներ իրականացնելու պայմանագրով ամրագրված պարտավորվածություն չունի, իսկ չկատարած աշխատանքի համար էլ պատասխանատվություն չի կրում: Եվ, դաստիարակության ամբողջ խնդիրը, ըստ էության, հանգում է ուսուցչի բարոյական մոտեցմանը. ինչքանով է նա կատարում ուսուցիչ լինելու իր առաքելությունը:

Ավելի դժվար լուծելի է կրթական խնդիրների իրականացման գործում աշակերտի պատասխանատվության դրսևորման հարցը: Ի տարբերություն ուսուցչի՝ վերջինս չի գիտակցում իր պատասխանատվության չափը: Տվյալ պարագայում, ուսուցչի պարտականություններին է ավելանում նաև աշակերտի մոտ համապատասխան գիտակցության ձևավորման խնդիրը: (տես 12)

Մաթեմատիկայի դասավանդման գործընթացը այս ուղղությամբ պահանջում էավելի մեծ և լրացուցիչ ջանքեր: Թեթևամտության, անտարբերության, անբարեխղճության և անփութության ցանկացած դրսևորում կարող է ձախողել ուսումնական նյութի յուրացումը, ինչը բացասաբար կանդրադառնա նաև այդ նյութից կախված հետագա թեմաների յուրացման վրա, իսկ մաթեմատիկայի պարագայում այդ հանգամանքը ունի վճռորոշ նշանակություն: Այսպիսով՝ ուսուցչի պարտականությունների կատարման հարցը՝ արժեքների ձևավորման հարցով, իրավական դաշտից տեղափոխվել է բարոյական դաշտ: Խնդիրը բարդանում է նրանով, որ կրթության զարգացման արդի միտումները գիտելիքի գերակայությունից տանում են դեպի արժեքների գերակայություն:

2.3 Բարոյական պարտականություն

Մաթեմատիկայի դասավանդման գործընթացը մարդուն մղում է ինտելեկտուալ գործողությունների, ինչը կարող է հաճույքների, նաև՝ հարբեցողության և շատակերության խոչընդոտ լինել: Այն նպաստում է նաև սովորողների կամքի կոփման, ինտելեկտուալ ազատության, խոհեմության և զգուշավորության հատկանիշների ձևավորմանը, որակներ, որոնք խոչընդոտում են ւնկնելու ուրիշների ազդեցության տակ: Հետևաբար, վստահորեն կարելի է ասել, որ մաթեմատիկայի դասավանդման գործընթացը մեծապես կանխում է վերոնշյալ արատների առաջացմանը: Մինևույն ժամանակ, մշտապես երկարատև մտավոր աշխատանքը, երևակայական աշխարհի հետ գործ ունենալը, ինչը հատուկ է մաթեմատիկներին, կարող է մարդուն հեռու պահել բնությունից և իրական շփումներից: Հարկ է նշել, որ ինտելեկտուալ կանոնությունների մեծացումը խոչընդոտում է ամուսնության գործընթացին: Պատահական չէ, որ կրթություն ստացած մարդիք ուշ են ամուսնանում, իսկ գիտությամբ զբաղվող մարդիկ երբեմն նույնիսկ ընդհանրապես չեն ամուսնանում: Ենթադրվում է, որ մաթեմատիկայի դասավանդման գործընթացը, մեծացնելով մարդու ինտելեկտուալ կարողունակությունների շրջանակը, կարող է չնպաստել նրա՝ իր տեսակը պահպանելու պարտքի իրականացմանը:

2.4 Մաթեմատիկան, սերը և հարգանքը

Կանտը(տես 6) առանձնացնում է ուրիշի նկատմամբ մարդու պարտականությունների երկու տեսակ: Առաջին տեսակի կատարումը համարվում է ծառայություն, որով նաև պարտականություն է դրվում ուրիշների վրա:Նման պարտականությունների կատարմանը ուղեկցում է սիրո զգացումը: Պարտականությունների երկրորդ տեսակի կատարումը ուրիշների վրա պարտականություն չի դնում. Այն պարտքն է, որը բխում է պարտավորությունից: Վերջինիս կատարումը ուղեկցվում է հարգանքի զգացումով: (տես 12)

Ուսուցչի՝ աշակերտին ցույց տրվող օգնությունը նաև պարտականություն է, որը բխում է իր պարտավորություններից և հետևապես, այն աշակերտի վրա պարտականություն չի դնում: Ուսուցչի այս աշխատանքը արժանի է հարգանքի: Իսկ դասընկերոջ կողմից

ցույց տրվող օգնությունը ըստ էության սիրո դրսևորում է, քանի որ այն չի բխում աշակերտի պարտականություններից:

Շատ հաճախ ուսուցչից պահանջվում են լրացուցիչ ջանքեր աշակերտի կողմից որևէ թեորեմի ընկալման կամ ապացուցման դժվարությունները հաղթահարելու համար: Նման դեպքերում պարտականությունից չբխող գործողությունների իրականացումը ուսուցչի սիրո դրսևորումներ են: Դրանք են, որ աշակերտի մոտ առաջացնում են փոխադարձ սիրո, երախտագիտության զգացմունքներ:

Մաթեմատիկայի դասավանդման գործընթացը կարիք ունի ուղղորդվելու դեպի մարդասիրական պարտքի իրականացում, չպետք է թույլ տալ , որ այն նպաստի էգոիզմի ամրապնդմանը, ինչը հատուկ է այն դասարաններում, որտեղ կան շատ թույլ երեխաներ և նրանց ի հակադրում՝ ուժեղ զարգացած տրամաբանություն ունեցողներ: Երբ դասը վեր է ածվում զուտ մաթեմատիկա առարկայի ուսուցման , որտեղ ի ցույց են դրվում և համեմատվում աշակերտների գիտելիքները, կարող են գլուխ բարձրացնել վարքի այնպիսի դրսևորումներ ինչպիսիք են ծաղրանքը, նախանձը, հակակրանքը, էգոիզմը: Դրա դեմ պայքարելու համար նպատակահարմար է մաթեմատիկայի դասընթացում հնարավորինս շատ կիրառել համագործակցային մեթոդը: Ցանկանում ենք մեջբերել Շ. Ամոնաշվիլու խոսքերը. «Իմ բացառիկ պարտքն էմ համարում երեխայի հոգևոր աշխարհին հարստացնել մարդկային արարչագործության հրաշալի ստեղծագործություններով, այնտեղ ցանել վեհ գաղափարների ծիլեր, որոնցից հետագայում պետք է ծնվեն համոզմունքներ, աշխարհայացք, բարոյական համոզմունքներ»:(տես 1)

Մաթեմատիկական գործունեություն իրականացնելու համար մարդու պատասխանատվության իրականացումը որոշ դեպքերում նման է բարոյական ազատության իրականացման համար մարդու կրած պատասխանատվությանը: Այդ պատճառով է որ հետաքրքրաշարժ, հատկապես տրամաբանական խնդիրները առանձնակի հետաքրքրություն են առաջացնում մարդկանց մոտ: Դրանց լուծումները յուրաքանչյուր մարդ փորձում է ստանալ ինքնուրույն: Եվ իր գործողության զնահատականը ինքնագնահատականն է, իսկ պատասխանատվությունը մարդ կրում է միայն իր առջև՝ իր խղճի առջև:

Փորձ 1

Հետազոտական թեստային աշխատանք

Հետազոտությունը կատարվել է սույն թվականի սեպտեմբերի տասից մինչև երեսունը ընկած ժամանակահատվածում: Թիրախային խումբ՝ 14-17 տարեկան աշակերտներ Մեդրի քաղաքից և հարակից գյուղերից: Թեստի տեսակը՝ փակ, անանուն:

Հետազոտության նպատակը՝ փորձով ստուգել տեսական եզրահանգումների ճշմարտացիությունը այն մասին, որ անձի պատասխանատվության և պարտքի բարոյական որակի ձևավորման մեջ էական դեր ունի Մաթեմատիկա առարկան: Կատարվել է անհրաժեշտ վիճակագրական տվյալների հավաքագրում և մշակում:

Թեստավորման արդյունքում պարզվել է, որ աշակերտների 45%-ը ունի պատասխանատվության բարձր զգացում (թեստի արդյունքում հավաքած միավորները 7-11), որից 43%-ը ունի 6,7,8,9 գնահատականներ Մաթեմատիկա առարկայից: Մնացած 55%-ը ունեն ցածր պատասխանատվության զգացում և մաթեմատիկա առարկայից ստանում են 3,4,5 միավորներ: Այս արդյունքը հաստատում է նախնական վարկածը և կարևորում է Մաթեմատիկա առարկայի ուսուցման դերը մեր երկրի պատասխանատու քաղաքացու ձևավորման գործում:

Հավելվածում կներկայացնենք թեստի նմուշը:

Փորձ 2

Հարցում

Հետազոտական աշխատանքի երկրորդ փուլում կատարվել է հարցում վերոնշյալ ժամկետում՝ ուսուցիչների շրջանում: Հարցման մասնակիցները քննարկել են հետևյալ թեմաները՝

- Ինչ կրթական ներուժ ունի մաթեմատիկան: Արդյոք այն նպաստում է աշակերտների մոտ բարոյական որակների ձևավորմանը:
- Մաթեմատիկան արդյոք ձևավորում է սովորողի մոտ պատասխանատվություն:
- Որպես ուսուցիչ, դասի ընթացքում ինչպես եք օգտագործում մաթեմատիկան՝ սովորողներին ավելի պատասխանատու քաղաքացի դարձնելու նպատակով:

Ցանկանում ենք առանձնացնել պատասխաններից մի քանիսը: Որոնք են՝

- Մաթեմատիկան աշակերտին ստիպում է յուրաքանչյուր դասին պատրաստ լինել, իսկ դա խթան է պատասխանատվություն ձևավորելու համար:
- Ցանկացած բարդ աշխատանքի կատարում հենց պատասխանատվություն է ձևավորում:
- Մաթեմատիկան աշակերտին սովորեցնում է պլանավորել քայլերը:
- Իմ պրակտիկան ցույց է տալիս, որ մաթեմատիկայով հետաքրքրվող աշակերտներս հետագայում ավելի պարտաճանաչ մարդիկ են լինում:
- Դասի ընթացքում ստիպում եմ յուրաքանչյուր կատարած քայլը հիմնավորել: Այսպիսով աշակերտը գիտակցում է, որ ցանկացած արարքի համար ինքը պատասխանատու է:
- Խմբային աշխատանքի ժամանակ հիմնականում ավագ եմ նշանակում մաթեմատիկայի դասիին ոչ ակտիվ աշակերտի:
- Տնային հանձնարարությունը չկատարելու դեպքում անմիջապես չեմ գնահատում, այլ սովորեցնում եմ ճիշտ տնօրինել ժամանակը:
- Կարծում եմ ապացուցման հերքման մեթոդին տիտապետելը և կիրառելը նույնպես վկայում է պատասխանատու լինելու մասին:

Եզրակացություն

Այսպիսով, կատարելով մաթեմատիկա առարկայի ուսուցման գործընթացում սովորողների մոտ պատասխանատվության զգացումի դաստիարակման, ինչպես նաև, ընդհանրապես նրանց մոտ անձնային հատկությունների ձևավորման խնդիրների մասով գրականության լայնածավալ ուսումնասիրություն և առանձնացնելով այն հիմնական շեշտադրումները, որոնք հենակետային կարող են լինել անձի ձևավորման գործընթացում, մեր կողմից անցկացվել է դիտում, հարցում, զրույց, մշակվել է և փորձարկվել թեստային համակարգ, որի արդյունքները ապացուցում են տեսական եզրահանգումների ճշմարտացիությունը այն մասին, որ անձի բարոյահոգեբանական դաստիարակության գործընթացում բացի գենետիկ և ընտանեկան նախադրյալներից շատ էական նշանակություն կարող է ունենալ մի շարք առարկաների և հատկապես՝ մաթեմատիկայի ուսուցումը, ինչից հետևում է, որ վերջինիս մեթոդապես ճիշտ մատուցումն ու ներկայացումը առավել քան կարևոր է մատաղ սերնդի դաստիարակման համար: Եթե միջին դպրոցականն իր տարիքային առանձնահատկություններից ելնելով ամբողջապես չի գիտակցում իր առջև դրված պատասխանատվության չափը, ապա հարցին այլ կերպ է նայում ավագ դպրոցականը: Իսկ ավագ դպրոցում, ծնողները, ելնելով իրենց երեխաների կրթությունը շարունակելու, կամ, ավելի ճիշտ՝ ընդունելության համար միավորներ հավաքելու անհրաժեշտությունից՝ դիմում են կրկնուսույցներին: Այսօրվա կրթական բարեփոխումները պետք է առաջնահերթ ծառայեն՝ ավագ դպրոցականին դպրոց և դասարան վերադարձնելու նպատակին: Կրկնուսույցներն ու պարապմունքները առարկայի միջոցով բարոյական արժեքներ չեն ձևավորում աշակերտի մոտ:

Վերջում ցանկանում ենք մեջբերել Ու. Չերչիլի խոսքերից՝ «Դպրոցի ուսուցիչները ունեն այնքան մեծ իշխանություն, որի մասին վարչապետերին մնում է միայն երազել»:

Գրականություն

1. Амонашвили Шалва Александрович - Как живете, дети? 1986
2. Балашов Л, Этика 2008
3. Бекон Ф, Сочинения 1978
4. Гегель , Сочинения 1977
5. Гурджиев Г , «Я есть» (из рукописи 1939 года)
6. Кант И, Сочинения
7. Шаталов Ф, Точка опоры, 1987
8. Ավագյան Ա, Հիշողության երևույթը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում, Մաթեմատիկան դպրոցում ամսագիր, 2009
9. ԴանիելյանՍ, Հոգեկան երևույթները և մաթեմատիկայի դասավանդման գործընթացը, Մաթեմատիկան դպրոցում ամսագիր 2000
10. Միրայելյան Հ, Խաղերը որպես մաթեմատիկայի դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու միջոց, Մաթեմատիկան դպրոցում ամսագիր 1999
11. Միրայելյան Հ, Մաթեմատիկական կրթությունը և սովորողների հոգեկան կոփումը, Մանկավարժություն ամսագիր, 2010
12. Միրայելյան Հ, Բարոյական արժեքները և մաթեմատիկայի կրթական ներուժը, 2011
13. www.science-education.ru
14. www.spiritoftime.su
15. Հանրակրթության պետական չափորոշիչ
16. www.wikipedia.org

Հավելված

Թեսթ

1. Գրավոր աշխատանքի որ տեսակն էք սիրում
 - Թեստային՝ նշովի պատասխաններով
 - Հարցերի պատասխանները և լուծումները պահանջող
2. Մաթեմատիկա առարկան սովորում էք
 - Վատ
 - Լավ
 - Բավարար
 - Գերազանց
3. Մաթեմատիկայի դասը լսում էք, որովհետև
 - Ուսուցիչը լավ է բացատրում
 - Ուսուցչին սիրում էք
 - Առարկան ձեր համար կարևոր է
4. Մաթեմատիկան սովորում էք որորովհետև
 - Սիրում էք առարկան
 - Որ հանձնեք քննությունները
 - Առանց դրա դժվար կլինի հետագա կյանքում
5. Դասերն ավարտելուց հետո տուն եք գնում և Նշիր հերթականությամբ:
 - Տնային աշխատանքներս եմ կատարում
 - Բակ եմ դուրս գալիս
 - Համակարգչով եմ աշխատում
 - Ծնողներիս եմ օգնում
6. Մարդն ունի պարտականություններ իր համայնքի հանդեպ
 - Այո
 - Ոչ
7. Տնային աշխատանքը անհրաժեշտ է կատարել, որ
 - Ամրապնդվեն գիտելիքները
 - Ուսուցիչը ցածր չգնահատի
8. Բնության գրկում հանգստանալուց հետո ձեր աղբը հավաքում էք

- Այո, իհարկե
- Ոչ, դրա կարիքը չեմ տեսնում

9. Ընտրվել եք դասարանի կողմից որպես ավագ

Այո

Ոչ

10. Դպրոցական միջոցառումներին մասնակցում եք

- Այո
- Ոչ
- Ոչ միայն մասնակցում եմ, այլև՝ ինքս եմ կազմակերպում

11. Մարզանք անում եք

- Այո
- Ոչ

12. Առավոտյան վատ ինքնազգացողության դեպքում դասի գալիս եք?

- Այո, դասերը կարևոր են
- Ոչ, ցանկացած առիթ օգտագործում եմ դասից բացակայելու համար

13. Արդյոք հայրենիքի հանդեպ պարտքը պարտադրում է լավ սովորել մաթեմատիկան

- Այո
- Ոչ

14. Մաթեմատիկայի դասին մասնակցում են ձեր դասարանի

- Այդ առարկայից բարձր գնահատական ունեցողները
- Մեծ մասը
- Գրեթե ամբողջ դասարանը

15. Համայնքում կամավորական աշխատանքների մասնակցում եք?

- Այո
- Ոչ

